ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ ԳՄ ԳՀԽԾՁԲ-2023/03 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՁԵՎՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՆԻՍՏԻ

ք.Գավառ «30» օգոստոսի 2023թ.

ժամը 12:00

Մասնակցում էին

Հանձնաժողովի անդամներ՝ Գ.Խաչատրյան /նախագահ/,

Բացող անդամներ՝ Յու.Մուշեղյան, Գ.Չարվադարյան

Գնահատող անդամներ Ա.Մելքոնյան, Գ.Մելքոնյան

Քարտուղար՝ Ա.Բադեյան

ՀՀ ԳՄ ԳՀԽԾՁԲ-2023/03 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի մասին.

1) Գնումների համակարգող /քարտուղար/ Արթուր Բադեյանը հայտնեց, որ Armeps էլեկտրոնային համակարգով հայտ է ներկայացրել 1 /մեկ/ մասնակից՝

N	Մասնակցի անվանումը	Մասնակցի հասցեն
1	«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ	ք. Երևան, Ավան, Սայաթ-Նովա թաղ 8 info@haldi.am

2) Ուսումնասիրելով ՀՀ ԳՄ ԳՀԽԾՁԲ-2023/03 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացրած հայտը պարզվեց, որ՝

-«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է հրավերի 2.2.2 կետով պահանջվող լիցենզիան, հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում վերոնշյալ լիցենզիայի ներքո պատշաճ ձևով իրականացրած նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր և պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող աշխատանքային ռեսուրսների վերաբերյալ տվյալները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 41-րդ կետը հանձնաժողովը **որոշեց՝**

1) Կասեցնել նիստը 1 /մեկ/ աշխատանքային օրով՝ «ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները և էլեկտրոնային եղանակով գնահատող հանձնաժողովին ներկայացնել համապատասխան փաստաթղթերը:
2) Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ս/թ սեպտեմբերի 1-ին ժամը 16:30-ին, ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7, ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի վարչական շենք, N 205 աշխատասենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ		
նախագահ՝		Գ.Խաչատրյան
անդամներ՝		Յու.Մուշեղյան
		Գ.Չարվադարյան
		Ա.Մելքոնյան
		Գ.Մելքոնյան
քարտուղար՝		Ա.Բաղեյան